խօսք մուհտուն զի՞ էր, և յո՞յր հանգչի բանն։ Եւ որպէս կամի անցանի վէզիրն թէ Ահա ոկսաւ որդ[1]) լինել ի մէջ տէրութեան քո, և մեծութիւն քո քեզէն լըւաւ զխօսք նորա։ Եւ թագաւորն հաւատայր նմա յոյժ յոյժ, և Դո՛ւ գիտես, ասէ։ Եւ զայն օր խսկոյն ըմբռնեալ զնա և հանին ի տանէն յանկարծօրէն, եդին ի նաւ և աքսորեցին դէպ ի Ղարամուսալ։ Յառաջագոյն երկոքեանս միակամ էին, զի Անատոլի էր զազի և երեր մուհտի արար, այս է՝ Պօլուլի Մուստաֆայ. և երբ ընդ վալիտին եղև և զվէզիրն կամէին ուտել և ինքեանք յառաջանային, ոչ եղև այնպէս, այլ վէզիրն յաջողեցաւ։ Եւ եդ մուհտի զԱնատոլոյ զազիէսքէրն որ երբեմն գերի անկեալ էր ի Ֆըռանկս ի գնալն ի Մըսըր ընդ սեաւ Ներքինոյն, որ պատերազմի սկիզբն եղև։

Ապրիլի Գ Զատիկն սուրբ, որ եղև ի թվականիս ՌՃՐ։ Այնք որ պատճառ եղեն սպանման Թումա կոչեցեալ վարդապետի և եղև դրամից բազմաց խարճ, զոր ասացաք փոքր ի չատէ անցեալ ամին, յորոց ծախից զմի բաժինն յԵրուսաղէմայ կնքոնն ևս մօհրել ետուն զթուղթն, որ ինքեանք մօհրեալ էին ձեռամբ Աստուածատուր վարդապետի ԺԴՌ զուռուշի։ Եւ պահանջէր տէր դրամին ի նոցանէ, և նոքա պահանջէին ի վարդապետացն, և նոքա ոչ տային և ոչ մի. և մաքառէին ընդդիմանային էրիցօք և աշխարհականօք, մեծամեծօք և փոքուրքք հանապազ առ նոսա, որ նստեալ կային յեկեղեցի Սրբոյն Գէորգայ։ Այնքան անկան վարդապետքն և խօճայք քաղաքիս, մինչ զի մահու ջանացին միմեանց և բազում կռիւն։ Եւ խօճայքն ընդ Եղիազարն մախային և զԱստուածատուր

1) որթ.